Հաստատված է
«Հայկական կրթական ցանց»
ՔՀԿ կոալիցիայի
Համակարգող խորհրդի
նիստի որոշմամբ առ 17.06.2019
Համակարգող խորհրդի նախագահ՝
Արտաշես Տոռոզյան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՑԱՆՑ» (ՀԿՑ) ՔՀԿ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ և ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՊԼԱՆ

(2019-2021թթ.)

Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայկական կրթական ցանցի կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Գործընկերություն և ուսուցում» հասարակական կազմակերպությունը և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

1. ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ Կառավարության 2012 թ. հոկտեմբերի 4-ի որոշմամբ հաստատվել է ՀՀ մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգն ու 2012-2015 թթ. գործողությունների պլանը: 2015 թ.-ից հետո որևէ հստակ գործողությունների պլան և չափորոշիչներ սահմանված չեն, որոնք անորոշ են դարձնում մասնագիտական կողմնորոշման ընդունված հայեցակարգի գործնական կիրառումը:

Իրավական առումով նույնպես հստակ սահմանված դրույթներ չկան, մասնագիտական կողմնորոշման իրավական կարգավորմանն առնչվող որոշ դրույթներ ներառված են միայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» և «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում: Գործնականում, լայն իմաստով, մասնագիտական կողմնորոշման գործառույթը հիմնականում սահմանափակված է աշխատանք փնտրողներին աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելով, որն իրականացնում են «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (ԶՊԾԳ) զբաղվածության տարածքային կենտրոնները:

Որոշ մասնագիտական ուսումնական հաստատություններում վերջին տարիներին ստեղծվել են կարիերայի կենտրոններ, սակայն դրանք կարիք ունեն արդյունավետ մեթոդական ապահովման, ինչպես նաև աշխատաշուկայի, կարիերայի պլանավորման վերաբերյալ արդիական տեղեկատվության: Իրականացված վերապատրաստումները ուսուցիչների, սոցիալական մանկավարժների, դպրոցների տնօրենների ՄԿՈ գծով տեղակալների մեծ արդյունքներ չեն գրանցում:

Խնդրի կարգավորման մեջ մեթոդական չափորոշիչների սահմանումը, վերապատրաստման գործընթացի մշակումը գտնվում է ԱՍՀՆ-ի վերահսկողության ներքո, իսկ իրականացման գործընթացը ԿԳՆ պատասխանատվության ոլորտում է:

ՀՀ-ում բացակայում է պետական բյուջեից ֆինանսավորվող հստակ մեխանիզմ և համակարգ, որը հնարավորություն կտա մասնագիտական կողմնորոշումը իրականացնել հանրակրթական դպրոցներում:

ՎԵՐՋՆԱՆՊԱՏԱԿ

ՀՀ հանրակրթական դպրոցներում ներդրվել է մասնագիտական կողմնորոշման մեխանիզմ և համակարգ մինչև 2021 թվականը:

ՆՊԱՏԱԿ

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հաստատել է 2019-21 թթ. միջոցառումների ծրագիր մասնագիտական կողմնորոշման հայեցակարգը դպրոցներում ներդնելու և իրականացնելու համար:
2. Հայեցակարգի ներդրումը և իրականացումը կատարվում է ըստ միջոցառումների պլանի, ռեսուրսների և ժամկետի:
3. Մասնագիտական կողմնորոշումը դպրոցներում իրականացվում է աշակերտների կարիքներին և հետաքրքրություններին համապատասխան:

ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԹԻՐԱԽ ԼՍԱՐԱՆՆԵՐԸ

- ✓ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը,
- ✓ Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արտակ Աղբալյան
- ✓ Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյան
- ✓ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության բաժնի պետ Ռուզաննա Պեպանյան
- ✓ ՀՀ Կրթության ազգային ինստիտուտի հանրակրթության կառավարման և բովանդակային նորմատիվների մշակման բաժնի պետ Արմեն Հովսեփյան
- ✓ Երևանի քաղաքապետի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Աննա Ստեփանյան
- ✓ ՀՀ մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետեր

ՈՒԺԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Նպատակը և ենթանպատակները կամ խնդիրները	Ովքե՞ր են հիմնական որոշում կայացնողները: Ինչպիսի՞ դիրքորոշում ունեն նրանք խնդրո առարկայի վերաբերյալ. **Դաշնակից** **Չեզոք** **Խոչընդոտող**	Ո՞վ կարող է ներազդել նրանց վրա: Նրանց դիրքորոշումը: Ազդեցության աստիճանը՝ **Մեծ** **Միջին** **Ցածր**	Ովքե՞ր են ձեր հիմնական դաշնակիցները կամ գործընկերները այս հարցում:	Ի՞նչը կազդի որոշում կայացնողների վրա: (գաղափարներ, ապացույցներ, փաստարկներ, հետազոտություն, հավասարակիցների ճնշումներ, քաղաքական փոփոխություններ)	Ինչպիսի միջավայրում /շրջանակում են որոշումները կայացվում: - Փակ - Ներկայացուցչական / հրավիրովի - Պահանջով ձեռքբերված
ՀՀ բոլոր դպրոցներում ներդրվել է մասնագիտական կողմնորոշման մեխանիզմ մինչև 2021 թվականը:					
1. Մասնագիտական կողմնորոշման հայեցակարգը ներառում է ‹‹Պարտադիր դասաժամի›› մոդելը, որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:	1.1 Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արտակ Աղբալյան Դաշնակից (հայեցակարգը առկա է, հաստատման փուլում է) 1.2 Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյան Չեզոք (պայմանավորված անձով)	ՀԿՑ համակարգող խորհուրդ (միջին) Աշակերտներ (ցածր-միջին) Միջազգային կազմակերպություններ - ֆինանս (Մեծ) ՁԼՄ (միջին-մեծ) Քարոզարշավ (ճանապարհով անցած մարդիկ) (մեծ)	Ուսումնական հաստատությունների (եղած փորձի հիման վրա, մեր կազմած մոդելի արդյունավետությունը ցույց տալ) ԿԳՆ և Աշխ և սոց հարցերի նախարարություն (քանի որ հայեցակարգը կա, իրենք էլ ունեն ցանկություն, որ ավելի	Վերլուծություններ – վիճակագրություն Միջազգային կազմակերպությունների առաջ քաշած նախապայմաններ ֆինանսի վրա Հանրային քարոզարշավ և հանրային կարծիք	Մոդելի քննարկում – ներկայացուցչական Մոդելի հաստատում - փակ

			արդյունավետ մոդել ներդրվի, ավելի պարզ ու քիչ ռեսուրսներով) Միջազգային կազմակերպություններ (ունեն գումարներ, այս ոլորտը առաջնահերություն է) ԵՄ (ունի գումար և առաջնայնություն)		
2. ՀՀ կրթության և գիտության, սոցիալական հարցերի և աշխատանքի նախարարությունները հաստատել են 2019-21 թթ. միջոցառումների ծրագիր մասնագիտական կողմնորոշման հայեցակարգը դպրոցներում ներդնելու և իրականացնելու համար:	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արտակ Աղբալյան Դաշնակից (հայեցակարգը առկա է, հաստատման փուլում է) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյան Չեզոք (պայմանավորված անձով) Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության բաժնի	ՀԿՑ համակարգող խորհուրդ (միջին) Միջազգային կազմակերպություններ - ֆինանս (Մեծ)	Կրթական հաստատություններ Աշակերտներ և գործատուներ, ովքեր անցել են մոդելի փորձարկման փուլը և կարող են կիսվել արդյունքներով Միջազգային կազմակերպություններ - ֆինանս	Հանրային քարոզարշավ Հաջողված պատմություններ Վերլուծություն – վիճակագրություն Ոլորտային մասնագետների կարծիքների միջոցով լոբբինգ	Միջոցառումների ծրագրի քննարկում – ներկայացուցչական Ծրագրի հաստատում - փակ

	պետ Ռուզաննա Պեպանյան (Դաշնակից)				
3. Հայեցակարգի ներդրումը և իրականացումը կատարվում է ըստ միջոցառումների պլանի, ռեսուրսների և ժամկետի:	3.1 Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արտակ Աղբալյան Դաշնակից 3.2 Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության բաժնի պետ Ռուզաննա Պեպանյան (Դաշնակից) 3.3 Երևանի քաղաքապետի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Աննա Ստեփանյան.	ՀՀ Կառավարություն /մեծ/ ՀՀ ԿԳ նախարար /մեծ/ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար /մեծ/ ՀԿՑ /միջին/	ՀՀ Կառավարությոն /հաստատված ծրագիրն իրենից ենթադրում է պարբերական հաշվետվություններ և արդյունքների ներկայացում/ Ուսումնական հաստատություններ Միջազգային կազմակերպություններ	Արդեն իսկ հաստատված ծրագիր Կառավարության կողմից ՀՀ ԿԳ և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների հրամաններ ՀՀ ԿԳՆ հանրակրթության վարչության, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության բաժնի հանձնարարականներ	Արդյունքների ներկայացում - ներկայացուցչական / պահանջով ձեռքբերված (Կախված մարզից և քաղաքից) Պլանի վերահսկում - փակ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Վերջնանպատակ և նպատակներ	Ցուցիչ	Ժամկետ
Վերջնանպատակ. ՀՀ բոլոր դպրոցներում ներդրվել է մասնագիտական կողմնորոշման մեխանիզմ և համակարգ		մինչև 2021 թվականը:
Նպատակ 1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և սոցիալական հարցերի և աշխատանքի նախարարությունները հաստատել են 2019-21 թթ. միջոցառումների ծրագիր մասնագիտական կողմնորոշման հայեցակարգը դպրոցներում ներդնելու և իրականացնելու համար:		Մինչև 2020 թվականի ապրիլ
1.1 Առաջարկությունների փաթեթի մշակում	Մշակմանը մասնակից առնվազն 20 կազմակերպություն: Առաջարկությունների 1 փաթեթ:	2019 թ.-ի մարտ-մայիս ամիսներ
1.2 Հանդիպում-քննարկումների իրականացում պատկան նախարարությունների հետ առաջարկները քննարկելու նպատակով	1 հանդիպում ՀԿ ցանցի և ԿԳՆ ներկայացուցիչների միջև: 1 հանդիպում ՀԿ ցանցի և ԱՍՀՆ ներկայացուցիչների միջև: 1 եռակողմ հանդիպում ԿԳՆ-ՀԿՑ-ԱՍՀՆ միջև: Հանդիպումների արդյունքում ընդունված առաջարկների փաթեթ:	2019 թ.-ի մայիս–հուլիս ամսիներև

1.3 Միջոցառումների ծրագրի և ժամանակացույցի համատեղ մշակում	Առկա 1 եռակողմ հուշագիր: Առաջարկությունների ընդունված 1 փաթեթ նախարարությունների կողմից: Մշակված միջոցառումների ծրագիր 2020-21 թթ.:	2019.թ.-ի հոկտեմբեր- դեկտեմբեր ամիսներ
Նպատակ 2. Հայեցակարգի ներդրումը և իրականացումը կատարվում է ըստ միջոցառումների պլանի, ռեսուրսների և ժամկետի:		
2.1 ՀՀ 10 մարզերի 150 դպոցներում մոնիտորինգ:	10 մարզերի 150 դպրոցներում մոնիտորինգ	2020 թվականի ապրիլ-նոյեմբեր
2.2 Մոնիտորինգային զեկույցի պատրաստում:	Զեկույցի առկայություն	2020 թվականի դեկտեմբեր
2.3 Զեկույցի արդյունքների հանրային քննարկում:	1 հանրային քննարկում աշակերտների հետ 1 հանրային քննարկում ծնողների և ուսուցիչների հետ 1 հանրային քննարկում նախարարությունների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ	2020 թվականի դեկտեմբեր
2.4. Միջոցառումների ծրագրի վերանայում	Վերանայված և հաստատված միջոցառումնրի ծրագիր	2021 թվականի հունվար-փետրվար
2.5 Այլընտրանքային ֆոնդերի /ներառյալ դրամաշնորհների/ իրականացում համակարգի և մեխանիզմի արդյունավետ իրականացման համար:	Վերանորոգված և վերազինված 1-ական դասասենյակ հանրակրթական 10 դպրոցներում:	

Նպատակ 3. Մասնագիտական կողմնորոշումը դպրոցներում իրականացվում է աշակերտների կարքներին և հետաքրքրություններին համապատասխան:		
3.1 Հարցումներ և հարցազրույցներ աշակերտների հետ:	1000 հարցման մասնակից՝ յուրաքանչյուր մարզից 100 աշակերտ: 100 հարցազրույց՝ յուրաքանչյուր մարզից 10 աշակերտ:	
3.2 Հարցումներ և հարցազրույցներ ուսուցիչների հետ:	500 հարցման մասնակից՝ յուրաքանչյուր մարզից 500 ուսուցիչ: 50 հարցազրույց՝ յուրաքանչյուր մարզից 5 ուսուցիչ:	
3.3 Հարցումներ և հարցազրույցներ դպրոցների տնօրենների հետ:	100 հարցման մասնակից՝ յուրաքանչյուր մարզից 100 տնօրեն: 50 հարցազրույց՝ յուրաքանչյուր մարզից 5 տնօրեն:	
3.4 Մոնիտորինգային այցեր և դասալսումներ որակի ստուգման նպատակով:	150 մոնիտորինգ՝ յուրաքանչյուր մարզում 15 դպրոցում: 150 դասալսում՝ յուրաքանչյուր մարզում 15 դպրոցում:	
3.5 Մասնագիտական կողմնորոշման կարևորության մասին հանրային քարոզարշավ:	1 հանրային քարոզարշավ	

2. ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2016/2017 ուս. տարում հանրապետությունում գործել են Ն(Ա)ՄՄԿ ծրագրեր իրականացնող 56 պետական ուսումնական հաստատություններ (25 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն, 26 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 4 կրթահամալիր, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն), որոնցում սովորում են շուրջ 7300 ուսանողներ (այդ թվում՝ 7191-ը՝ անվճար հիմունքներով): Բոլոր 25 արհեստագործական պետական ուսումնարանները գործում են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ և դրանցում աշխատում են շուրջ 870 դասախոսներ ու արտադրական ուսուցման վարպետներ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագիր իրականացվում է նաև «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ում:





Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնում են թվով 102 ուսումնարաններ, քոլեջներ, կրթահամալիրներ, հիմնադրամներ և բուհեր:



Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների թվաքանակը կազմել է 6 874, որոնց 27,1%-ը կանայք են: Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 97,9%-ը, իսկ վճարովի՝ 2,1%-ը:

81 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում ուսանողների թվաքանակը կազմել է 21 225, որոնց 46,3%-ը կանայք են: Վճարովի ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 36.2%-ը, իսկ անվճար՝ 63.8%-ը: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 7,2% (կանանց՝ 4,2%, տղամարդկանց՝ 9,8%): Ուսանողների 91,9%-ը (անվճար ուսուցմամբ ուսանողների՝ 93,9%-ը) ստացել է կրթաթոշակ (4 000 դրամից ավելի):

Հանրապետության 97 միջին մասնագիտական պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում 2015/2016 ուս. տարում սովորել է 24 300 (կանայք՝ 54,4%) մարդ: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 10,9% (կանանց՝ 12,5%, տղամարդկանց՝ 9,5%): 16 միջին մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատություններում ուսանողների թվաքանակը կազմել է 1 563, որոնց 67,0%-ը կանայք են:



Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող օտարերկրյա ուսանողների թվաքանակը կազմել է 434, որից 275-ը՝ կանայք: Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների հանրակացարանի կարիք ունեցող 432 ուսանողների 75,0%-ն է ապահովված հանրակացարանով:

2015 թ. վերանայվել և ՀՀ Կառավարության 2015 թ. հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1139-Ն որոշմամբ հաստատվել են Ն(Ա)ՄՄԿ մասնագիտությունների ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ուսուցման հիմքի, ձևի, տևողության և որակավորումների, որոնք ներառում են արհեստագործական կրթության 113 մասնագիտություն՝ 283 որակավորմամբ, որոնցից ներկայումս ուսուցանվում է շուրջ 55 մասնագիտություն, միջին մասնագիտական կրթության 247 մասնագիտություն՝ շուրջ 252 որակավորմամբ, որոնցից ներկայումս ուսուցանվում է շուրջ 100 մասնագիտություն:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) որակի բարձրացումն ու դրա համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին՝ հաշվի առնելով ՀՀ մարզերի զարգացման ռազմավարության գերակայությունները, մնում է համակարգի զարգացման գլխավոր մարտահրավերները: Այն ձևակերպված է ՀՀ ԿԳՆ կողմից մշակված՝ ՀՀ ՄԿՈՒ 2018-2022թթ. բարեփոխումների ծրագրի նախագծում1, որը նախատեսում է էականորեն բարձրացնել ՄԿՈՒ կառավարման արդյունավետությունը, ոլորտի ծախսային արդյունավետությունը, հզորացնել ինստիտուցիոնալ և մարդկային ռեսուրսների կարողությունները, ինչպես նաև ընդլայնել և հզորացնել երկխոսությունը սոցիալական գործընկերների հետ: Խնդիրներից են նաև ՄԿՈՒ հաստատությունների և գործատուների միջև համագործակցության ընդլայնումը, շրջանավարտների զբաղունակության մակարդակի բարձրացումն ու մասնագիտական կարողությունների համապատասխանեցումը աշխատաշուկայի արդի պահանջներին՝ ստեղծելով ցանցային և համագործակցային համակարգ: Առանձին ուշադրություն է դարձվում ՄԿՈՒ հաստատություններում համապատասխան մասնագետներով համալրված կարիերայի ուղղորդման միավորների ստեղծմանը, դրանց կողմից մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացմանը

[1] Վերոնշյալ ծրագրի նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (ՀՀ կառավարության 27.03.2014թ. №442-Ն որոշում) նպատակադրումները, ՀՀ կառավարության 2017-2022թթ. գործունեության ծրագիրը, մինչև 2030թ. Կայուն զարգացման 4-րդ նպատակի թիրախները, ԵՄ կողմից Հայաստանին տրամադրվող բյուջետային աջակցության ծրագրի դրույթները, ինչպես նաև ՄԿՈՒ ոլորտի վերջին տարիների ձեռքբերումներն ու մարտահրավերները:

2008 թվականին ընդունված[2] ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգում ՄԿՈՒ հիմնախնդիրների թվում նշում է, որ աշխատաշուկան, ի դեմս գործատուների, թույլ է ներգրավված այս համակարգի կառավարման աշխատանքներում: Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում լիարժեք ձևավորված չէ սոցիալական գործընկերությունը: Ներկայիս համակարգը բավարար ճկուն չէ և չի հասցնում ինքնակամ արձագանքել տնտեսության արագ զարգացող որոշ ճյուղերի պահանջներին: Այդ հայեցակարգի բաղկացուցիչ մաս հանդիսացող՝ Հայաստանում մասնագիտական կրթության բարեփոխումների 2009-2011թթ. ծրագրում և միջոցառումների ժամանակացույցում սոցիալական գործընկերության ամրապնդումն ու ինստիտուցիոնալացումը տեղ էր գտել որպես առանձին բնագավառ:

Նշյալ հայեցակարգին հաջորդած՝ Մասնագիտական կրթության և ուսուցման 2012-2016 թվա-կանների բարեփոխումների ծրագրում[3] նշված էր, որ «Սոցիալական գործընկերության լիարժեք ձևավորումը ՄԿՈՒ ոլորտում, գործատուների ներգրավումը և ակտիվ մասնակցությունը համակարգի կառավարման աշխատանքներում կնպաստի ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների արդյունավետ իրականացմանը և զարգացմանը՝ մասնավորապես, արագ արձագանքելու զարգացող տնտեսության որոշ ճյուղերի պահանջներին», իսկ սոցիալական գործընկերության ընդլայնումը սահմանված էր որպես ՄԿՈՒ ոլորտում բարեփոխումների 4 ուղղություններից մեկը:

Համաձայն Սեյվ դը Չիլդրեն Հայաստան կազմակերպության ***** հետազոտության ՀՀ աշխատաշուկայում ցածր է ՄԿՈՒ շրջանավարտների մրցունակությունը: Պատճառները

- ՄԿՈՒ հաստատություններում դասավանդող մասնագիտությունները և դրանց մատուցման մեթոդաբանությունը արդիական չէ:
- ՄԿՈՒ քաղաքականությունների և մասնագիությունների ցանկի մշակման և ուսուցման մեթոդաբանության մշակման,իրականացման և գնահատման փուլերում շահագրգիռ/գործատուններ,հավանական ուսանողներ ,շրջանավարտներ,ՔՀԿ-ներ և այլն.../ կողմերի ներգրավածությունը ցածր է:
- Կրթության գերատեսչության կողմից ընդունվել է սոցիալական գործընկերության մոդելի հայեցակարգ,սակայն այն գործնականում չի կիրառվում,:
- Սոցիալական գործընկերության մոդելի գործնականում կիրառելու համար առկա է քաղաքականության, միջոցառումներ ծրագրի և դրան կից պետական ֆինանասավորման բացակայություն:
-

[2] ՀՀ կառավարության արձանագրային որոշում № 51, 18.12.2008թ.
[3] ՀՀ կառավարության արձանագրային որոշում № 27, 04.07.2012թ.

ՎԵՐՋՆԱՆՊԱՏԱԿ

Մինչև 2021 թվականը Սոցիալական գործընկերության մոդելը ինստիտուցիոնալացված, և գործարկված է ՀՀ առնվազն 5 խոշորացված համայնքներում:

ՆՊԱՏԱԿ

Մշակված է եռամյա պետական ռազմավարություն և միջոցառումների ծրագիր մինչև 2020 թվականի հունիսը, և այդ գործում ապահովված է շահագրգիռ կողմերի պատշաճ մասնակցությունը

ՔԱՐՈՂԱՐՇԱՎԻ ԹԻՐԱԽ ԼՍԱՐԱՆՆԵՐԸ

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիակժլական հարցերի նախարարությունը, Գորիս և Սիսիան խոշորացված համայնքների ՄԿՈՒ 3 հաստատությունները (Գորիս համայնքի 2 ՄԿՈՒ հաստատությունների 305 ուսանող, Սիսիանի 1 ՄԿՈՒ հաստատության 193 ուսանող), հանրակրթական դպրոցները (Գորիս համայնքի 15 հանրակրթական դպրոցների 8-ից 12-րդ դասարանների 906 աշակերտներ, Սիսիանի 31 հանրակրթական դպրոցների 8-ից 12-րդ դասարանների 1375 աշակերտներ), տեղական ինքնակառավարման մարմինները, բիզնես միավորները, տարածքային զբաղվածության կենտրոնները և կրթության ոլորտում գործունեություն ծավալող ՔՀԿ-ները:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Վերջնանպատակ	Նպատակ	Ցուցիչ
Մարզային ֆորումների կազմակերպում	ՄԿՈՒ և կարիերայի ոլորտներում հիմնախնդիրների վերհանման և առաջարկությունների հավաքագրում	Ֆորումները կիրականացվեն Կապան, Գյումրի, Երևան, Գավառ քաղաքներում:
Տարածաշրջանային հանդիպման և աշխատաժողովի կազմակերպում բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ	ոլորտային հիմնախնդիրների քննարկումը	
ՄԿՈՒ և ԱՇ կապի և դպրոցներում կարիերային առնչվող խորհրդատվական համակարգի բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթի մշակում:	Մարզային ֆորումների և տարածաշրջանային հանդիպումների արդյունքում թիրախ ոլորտներում բացահայտված խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների հիման վրա փորձագետների կողմից կմշակվի առաջարկ-փաթեթ՝ ուղղված համայնքային, մարզային, ազգային մակարդակներում նորմատիվ-իրավական ակտերի և ընթացակարգերի բարելավմանը:	
Փորձագիտական խմբի ձևավորում և Սոցիալական գործընկերության համայնքային մոդելի նախագծի մշակում:	ՄԿՈՒ և կարիերայի ոլորտային փորձագետներից ձևավորված փորձագիտական խումբը կմշակի սոցիալական գործընկերության մոդելը:	
Սոցիալական գործընկերության շահագրգիռ կողմերի (բիզնես կառույցների, ՏԻՄ, ՔՀԿ, Կրթական հաստատություններ) հետ ՍԳ համայնքային մոդելի նախագծի քննարկում և ամբողջացում:	Համապատասխան առաջարկությունների և դիտարկումների հավաքագրում և մոդելի համալրում	
Սոցիալական Գործընկերության մոդելի հիման վրա համայնքային կառույցների ձևավորում և գործունեության կանոնակարգի մշակում:	Գորիս և Սիսիան խոշորացված համայնքների ՏԻՄ-երի հետ կստորագրվեն համագործակցության հուշագրեր կենտրոնների ստեղծման, նրանց ինստիտուցիոնալացման և կայունության ապահովման վերաբերյալ:	
Սոցիալական գործընկերության կառույցների կարողությունների զարգացում և աջակցության փաթեթների մշակում:		5 թեմատիկ մոդուլներով կարողությունների զարգացում՝ «Ռազմավարական պլանավորում», «Գործընկերության սկզբունքներ և հիմունքներ»,

		«Ֆոնդահայթայթում պլանի մշակում», «Դասընթաց դասընթացավարների համար», «Հաղորդակցում և բանակցություններ»:
Համայնքային կառույցների կառավարման մարմինների փորձի փոխանակում:	Սոցիալական գործընկերության մոդելի կիրառման և ինստիտուցիոնալացման նպատակով Սոցիալական գործընկերության կառույցների համար ծրագրի շրջանակներում կկազմակերպվեն փորձի փոխանակման այցելություններ /Տավուշ, Վայոց Ձոր, Երևան /ՄԿՈՒ հաստատություններ, որտեղ ներկայումս ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվում են ծրագրեր (օրինակ՝ Դուալ համակարգի ներդրում Իջևանում և Եղեգնաձորում):	
	ՔՀԿ-Կառավարություն ոլորտային աշխատանքային խմբի ձևավորում և ոլորտային հանրային քաղաքականության մշակում:	ԿԵՀ ծրագրի կոնսորցիումի անդամների աջակցությամբ կձևավորվի աշխատանքային խումբ, որի նպատակն է ՄԿՈՒ և Կարիերայի ոլորտներում հանրային քաղաքականության մշակումը:
	Ջատագովությանն ուղղված հանդիպումներ/ քննարկումներ համայնքային, մարզային և ազգային մակարդակներում:	Հանդիպումների նպատակն է համայնքային, մարզային և ազգային մակարդակում բանակցել ներդրվող մոդելի կիրառման և շարունակականության ապահովման ուղղությամբ/այդ թվում ՏԻՄ-ի կողմից ֆինանսավորման հատկացում/: